Արձանագրություն N 3

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» կարիքների համար՝ «ՀՀ Արարատի մարզի Միչյան, Արալեզ, Փոքր Վեդի, Մասիս և Նոր Կյանք համայնքների ջրամատակարարման համակարգի վերակառուցման» աշխատանքների ձեռքբերման նպատակով թիվ ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«22» «փետրվարի » 2022թ.

ք. Երևան

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հինգ անդամները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Նիստը տեղի ունեցավ 2022 թվականի փետրվարի 17-ից մինչև փետրվարի 22-ը:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ռուբեն Թերզյանը, իսկ քարտուղարն էր՝ Լիլիա Չախոյանը:

ՕՐԱԿԱՐԳ

Որոշվեց՝

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5 ծածկագրով ընթացակարգի «ՀՀ Արարատի մարզի Միչյան համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» ծրագրի նախագծող՝ «Ջրտուք» ՍՊԸ-ի 16.02.2022թ-ի թիվ 08 գրության քննարկում
2. ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5 ծածկագրով ընթացակարգի «ՀՀ Արարատի մարզի Միչյան համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» ծրագրի նախագծող՝ «Ջրտուք» ՍՊԸ-ի 16.02.2022թ-ի թիվ 08 գրության քննարկում

Հանձնաժողովն արձանագրեց, որ «Ջրտուք» ՍՊԸ -ի կողմից ներկայացվել է գրություն, որում նշվել է, որ «ՀՀ Արարատի մարզի Միչյան համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» ծրագրի մրցութային փաստաթղթում առկա է մեխանիկական վրիպակ: Սարքավորումների շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետների ցանկում ներառված ճնշման կարգավորիչը անհրաժեշտ է հանել ցանկից, քանի որ այն բացակայում է նաև ծավալաթերթում:

Հանձնաժողովի կողմից վերանայվել է «Ազաթ-777» ՍՊԸ-ի, «Բաղրամյան շին» ՍՊԸ-ի, «Փայլք» ՍՊԸ և «Շահարտ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հավելված 1.1-երը գնահատվել են բավարար, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝

Որոշվեց՝

1. Նիստը կասեցնել:

2. Բավարար գնահատված մասնակիցներին ծանուցել հայտնաբերված վրիպակի մասին և առաջարկել /ըստ պահանջի/ հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

3. Ընկերությունների կողմից բանակցություններ անցկացնելու պահանջ չի ներկայացվել:

4. «ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5» ծածկագրով ընթացակարգի չափաբաժին 1-ի մասով ընտրված մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից Տ-Քնսթրաքշն ՓԲԸ-ին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ՋԲՄ-ԱՇՁԲ-2022/2/1/2/3/4/5 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետի՝

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

2. «Արտաշատի ԷՑՇ» ՍՊԸ, «Փայլք» ՍՊԸ, «Բաղրամյանշին» ԲԲԸ, «Արտեզիա» ՍՊԸ, «Շինարվեստ» ՍՊԸ-ի, «ՇՄՇ-23» ԲԲԸ-ի, «Մեդիսոն էյբլ» ՍՊԸ-ների տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին:

3. Սահմանել անգործության ժամկետ 10 օրացուցային օր տևողությամբ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Ռուբեն Թերզյան

անդամներ՝

Էդուարդ Ջանջուղազյան

Նարեկ Մարգարյան

քարտուղար՝

Լիլիա Չախոյան